

այդ պիտական մեռնարկներէն մին պիտի ըլլայ ։  
 « Անշուշտ ան չպիտի լուծէ հրէութեան յաւ-  
 ւրտեանական խնդիրը , ան պիտի չընչէ հակա-  
 սեմականութիւնը , բայց նոր լոյս մը պիտի  
 սփռէ մինչև ցարդ մաւթ մնացած շատ մը  
 հարցերու վրայ ։ »

« Հրէական Հանրագիտարան »ը պիտի ընդ-  
 գրէէ Իորայէլի պատմութիւնը Հին Կտակա-  
 րանէն սկսեալ , Թայմուտական գիտութիւնը ,  
 « Քաղաքայ »ը մինչև Հրէաներու ամէն երկրի  
 մէջ ունեցած քաղաքական ու ընկերական  
 գերը , իրենց բնած տեղը օտար ազգերու  
 արուեստին , գրականութեան եւ գիտութեանց  
 մէջ ։ Հին պիտի զետեղուին կենսագրութիւնը  
 նշանաւոր Հրէաներու , նոյն իսկ անոնցը որ  
 կրօնափոխ են եղած ։ »

Այս լուրը կ'արձան ազնեք մաղթելով ան-  
 զամ մը հետ , որ իրենց ցեղին եւ ըստրայական  
 ինքնապաշտպանութեան համար Հրէաներու  
 ցոյց տուած ձեռներէցութեան եւ համարաշխ  
 ու կազմակերպեալ գործակցութեան . այս նոր  
 ու մեծ օրհնակը կարենայ զատ մը եւ զրդիէ  
 մ'ըլլալ Հայոց , որոնք Հրէաներէն աւելի պէտք  
 ունին այդպիսի հանրագիտարանի մը մէջ  
 ամփոփել ամէն ինչ որ հայ ցեղը կատարած  
 է աշխարհի վրայ , որովհետեւ եթէ օտարները  
 չեն գիտեր Հայուն գերը պատմութեան մէջ ,  
 Հայերն ալ զայն շատ կ'իսկատար ու սխալ  
 կերպով գիտեն ։

**ՀԱԾԿԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՐԵԿՈՅԹ ՄԸ**

« Անահիտ »ի տնօրէնը սկսած է կազմակեր-  
 պել հայկական արուեստի երկրորդ երեկոյթ  
 մը , որ պիտի ունենայ անցեալ տարուան ե-  
 րեկոյթին ծրագիրը , բայց որուն մէջ այս  
 անգամ աւելի մեծ տեղ պիտի արուի հայ ե-  
 կեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան ։

Գ. Փիէր Օպրի , Ֆրանսացի գանձօթ երաժշտա-  
 գէտն ու հայազէտր բանաստեղծութիւն մը պիտի  
 արտահանէ հայ երաժշտութեան վրայ ։ Կ'զ  
 Ծարլ Պորտի երգիչները , որոնք եկեղեցական  
 երգեցողութեան շաւաղայն երգիչներն են  
 Փարիզի մէջ , պիտի երգեն հայ եկեղեցական  
 երաժշտութեան շաւաղայն հատուածներ ,  
 խօսքերը Ֆրանսերէնի վերածուած ։ Եւ հղա-  
 նակները՝ Պոլսեցի նախկին զպրակտ ու հայ  
 եկեղեցական երաժշտութեան քաղածանօթ  
 պ. Յակոբեանի ձեռքով ձայնագրուած օ ջաջ  
 արուեստագէտներ պիտի երգեն մէկ քանի ծա-  
 զովրդական երգեր ։ Գին եւ նոր հայ բանաս-  
 տեղծութիւններու Ֆրանսերէն թարգմանու-  
 թիւնները պիտի արտասանուին Ֆրոնէտ-Ծըֆ  
 բանասէղի եւ Օտէոնի քանի մը մեծ արուես-  
 տագէտներու կողմէ . ա երեկոյթը տեղի պիտի  
 ունենայ յունուարի վերջերը ։ Կատարյթ պիտի  
 յատկացուի զարեւալ որբախնամ գործին ։

**Գ. ՄԵՅԵՆ ԵՒ ՀՍԵՐԻՆԻ ԲԵՄԸ  
 ՅՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ**

Գ. Մեյեէ հայերէնի դասախօսութեան բաց-  
 ման ճառը պիտի արտասանէ ղեկտեմբերի 22ի  
 երկուշաբթի օրը ։ Համակրելի հայազէտր որո-  
 շած է իր զանն թացքին տալ տրամադնա-  
 կան ու լայն ուղղութիւն մը ինչպէս զե՛ն չէ  
 ունեցած հայերէնի ո եւ է օտար ընմ՝ Եւրո-  
 պայի մէջ ։ պահպանելով հանդերձ Գին հայե-  
 րէնի դասաւանդութիւնը , պ. Մեյեէ իր զա-  
 սերուն մեծագոյն մասը պիտի յատկացնէ նոր  
 հայերէնի ուսուցման , եւ աշխարհաբար լեզ-  
 ւին հետ՝ փշխարհաբար գրականութեան վը-  
 ըայ եւս ղեգփփին մը տուլու համար Ֆրան-  
 սացի աշակերաններուն ։  
 Մեր յաջորդ թուով պիտի հրատարակենք  
 պ. Մեյեէի բացման ճառին ամփոփումը ։